ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 411 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 748-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 748-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

1) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին ենթակետով.

«10.1) Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիային անդամակցությամբ սահմանված Ազգային լանդշաֆտների կառավարման քաղաքականության իրականացման ուղեցույցների մշակում, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի շրջանակում դեգրադացված լանդշաֆտների վերականգնմանն ուղղված քաղաքաշինական համալիր համակարգված առաջարկների մշակում.»:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը բաժանել՝ ստեղծելով քաղաքաշինության վարչություն և ճարտարապետության վարչություն:

3. Այդ կապակցությամբ որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) 27-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 6-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ 7-րդ և 8-րդ ենթակետերով.

«7) ճարտարապետության վարչություն.

8) քաղաքաշինության վարչություն.»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ